# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by
the European Union

**«Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» Թվինինգ ծրագիր**




**Իրականացման ժամանակահատված:** 01.06.2022 - 31.05.2024

**ԱլԳ երկրներ:**

Armenia

**Ընդհանուր բյուջե:** € 1 000 000

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

IRZ - German Foundation for International Legal Cooperation, Ministry of Justice of Latvia

**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:**

**Նախագծի կայքէջ:**

**Նախագծի նկարագրություն:**

«Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ Թվինինգ ծրագիրը մեկնարկել է 2022 թվականի հունիսի 1-ին և կավարտվի 2024 թվականի մայիսի 31-ին: Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել Հայաստանի պետական հատվածում բարեվարքության տարածումը և կոռուպցիայի կանխարգելումը: Որպես հատուկ նպատակ՝ ծրագիրն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կրթական ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը, կոռուպցիայի կանխարգելման միջավայրի ստեղծմանը և ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացմանը:
Ծրագիրը նախատեսում է նաև աջակցել հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների իրականացմանը, մասնավորապես՝ ընդլայնելով ՀՀ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մշտադիտարկման կարողությունները:
Ծրագիրը իրականացվում է Միջազգային իրավական համագործակցության գերմանական (IRZ) հիմնադրամի, Լատվիայի Հանրապետության արդարադատության նախարարության, Լատվիայի կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրոյի (KNAB) կողմից՝ սերտ համագործակցելով շահառու պետական մարմինների հետ՝ ի դեմս ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի:

**Ակնկալվող արդյունքներ:**

Result 1: Institutional capacity of the Corruption Prevention Commission (CPC) to develop and assist in the implementation of anticorruption (integrity) education and public awareness programmes in Armenia increased.
Result 2: Strategic communication and collaboration mechanisms for the CPC are in place and functioning.
Result 3: Level of implementation of Anti-Corruption Strategy enhanced through developing monitoring capacity of the Ministry of Justice of Armenia.
Result 4: Business integrity of state-owned entreprises improved.